


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք. 10
Վեցամսեայ " 5
Արտասահման
Տարեկան ֆրք. 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք եւ չեն
տրուիր:

Հասցե
DIRAN PAPAIZIAN
RUE DRAGOMAN
K. STEPAN
BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայելի» ին մեջ աղոտ երեւնալ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

Գիւղերու և արտասահմանի կարգ մը բաժանորդներէն կը խնդրուի իրենց յետեւեալ բաժնեգրիները վճարել. հրապարակային ազդարարութեանց տեղի չի տալու համար:

ԱԶԳԱՅԻՆ

Պարկաստանի Նոր. Զողա քաղաքէն կը գրեն թէ, ժողովրդային հանգանակութեամբ նոյն քաղաքին կեդրոնը շինուելու վրայ եղող Օրիորդաց Ուսումնարանը աւարտելու մօտ է. մինակ այդ քաղաքի ազգային քրիչ ատենուան մէջ 19,101 կուան (ֆրանք) տոյրագրած են: Պարսկ. Հնդկաստանի առաջնորդ Տէրունեան Տ. Մաղաքիա եպիսկոպոս յատուկ կոնդակաւ մը Հնդկաբնակ, ծափայաբնակ և այլ կղզիաբնակ ազգայնոց ալ դիմում՝ ըրած է սոյն հանգանակութեան մասնակցելու համար:

— Ասկէ երկու շաբաթ առաջ՝ Կ. Պոլիս Սկիւտարի բնակիչներէն Միքայէլ Թարհոնճուեան ազգայինը՝ Սէլամբըզի կողմերը գիշերանց զարնուած էր շաբաֆորճներու կողմէ և ծանրապէս վիրաւորուելով՝ Ազգ. Հիւանդանոց փոխադ-

րուած էր: Բժշկական ամէն դարմաններու հակառակ, խեղճ մարդը անցեալ շաբաթ օրը մեռեր և յուղարկուորութիւնը կատարուեր է Ս. Խաչ եկեղեցին: Հանգուցեալը իր ունեցած 7-800 ոսկիի արժողութեամբ կարուածներուն մէկ մասը Ազգ. Հիւանդանոցին կտակած է և մէկ մասն ալ Ս. Խաչ եկեղեցիին Հիւանդանոցի Որբանոցէն տատերկու ուրբեր հետեւեր են դադալին:

— Էրզրումի Որբանոցին պաշտպաններն են, Բեդերպուրկի հայ տիկիները, ձեռամբ Պ. Կարապետ Եղեանի՝ 42 որբի համար, Ազգ. Պատրիարքարանը՝ 12 որբի համար, Ամերիկայի Փրէզնօ քաղաքին ազգայինները՝ 5 որբի համար, Էրզրումի ազգայինները՝ 38 որբի և Տարտանէլցի ազգային մը՝ մէկ որբի համար:

Որբանոցը կը գտնուի քաղքէն 5 ժամ հեռու դաշտին մէջ, Հինձք գիւղի հանդիպակաց բլուրի կողին վրայ, ուր կան սառնորակ ջուրի աղբիւր մը, ծառատան և բանջարանոց:

— Ներքին դործոց նախարարութիւնը հեռագրաւ յանձնարարեց Առանայի կուսակալութեան տեղեկագրել թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնել պէտք է Հաճը-

նի հ. կիզեալներուն տունները վերաշինելու համար: Հարցուց ժամագամայն թէ ինչ գումարի կը կարօտին այս նպատակով ըլլալիք ծախքերը:

— Պատրիարքարանի կողմէ Սեբաստիոյ և Ուլնիոյ եկեղեցիներուն շրջակայան եկեղեցական զգեստներ զորս, նուրի բաժ է բարեպաշտուհի հայ Տիկին մը:

— Սեպտ. 1 չորեքշաբթի օրը Նըպաստից Յանձնաժողովին մէջ գաւառային սրբանոցներու և աղքատիկ դպրոցներու դասագիրքերու հայթայթման նըլազուրկը տեղի ունեցաւ: Հայերէն գիրքերը 100ին 50 զեղչով պիտի տան գըրափաճառք իսկ թուրքերէն գրքերը Միհրան Արիկեան և Պետրոս Կարապետեան էֆէնտիներու կողմէ ԶՐԻ պիտի տըրուին:

— Նրեքշաբթի օրը գումարուած կրօն ժողովը որոշեց գրել Վառնայի Տ. Մարտիրոս քահանային, (որ բարեխօսած էր 'ի նպատակ Տ. Գէորգ Հիւրմիւզեանի,) յորդորել զայն որ շարունակէ կրել հոգեւոր իշխանութեան կողմէ սահմանուած այդ պատիժը:

Գոհութեամբ կը տեղեկանանք թէ Գահիրէի մէջ հաստատուած Վասպուրականի Որբախնամ ընկերութիւնը՝ այս անգամ Թիլիպէի մէջ ալ մասնաճիւղ մը ունեցած է, որ կը բաղկանայ վատահելի և պատուաւոր անձնաւորութիւններէ: Քաջայոյս ենք թէ Նգիպտոսի ազգայնոց պէս Պուլկարաբնակ ազգայինք ալ պիտի ընկերանան սոյն բարենպատակ գործին, անդամակցութեամբ և նուիրատուութեամբ, առ ի բարօք պաշտպանութիւն Վասպուրականի որբերուն:

Տօպրիչէն կը գրեն.

«Թաղ. Խորհրդոյ հրաւիրմամբ Արժ. Տ. Յովակիմ քահանայ Յովակիմեան ամսոյս 30ին քաջաքս հասնելով Ս. Եկեղեցւոյ մէջ սկսաւ քահանայադործելն»:

— Օգոստ. 6 թուականաւ Սալմաստէ կը գրեն Արմէնիայի թէ, «Քրդական արշաւանքը մէկ կողմէ, Պարսիկ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները միւս կողմէ սարսափելի կերպով կը ծանրանան Սալմաստի մէջ գեռ մնացող մի քանի տուն հայերու վրայ: Այս ամէնը առաջ կուգան միշտ մի քանի միամիտ և գործին անընդունակ մարդոց երեսէն, որոնք առիթ կուտան շարունակ և ամէն ժամանակ ստեղծել երեւակայական գաշադներ, հալոյդակներ խումբեր և ամբողջ հասարակութիւնը թէ ի Տաճկաստան և թէ ի Պարսկաստան խռովել, յուզել, մաշեցունել և ոչնչացունել զուր տեղը: Վերջին գէպքերու պատճառաւ Ատրպատականի օսմ. հիւպատոսները հրահանգ ստացան այլ ևս հայ գաղթականներուն անցագիր չի տալ թուրքիս վերադառնալու համար, որոնք իրենց հայրենիքը կը քաջութիւն կերթային հետզհետէ»:

ՀԵՈՍԳԻՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ, ԹՂԳԱՔԻՐ

Լոնտոն 13 Սեպտ.

Անգլիա իր պահանջումներու ժամին 48 ժամ պալմանաժամով վերջնագիր մը զրկեց Թրանսիլիանի Հանրապետութեան նախագահին:

Սօֆիա 13 Սեպտ.

Կը ծանուցուի թէ ն. Ա. Բարձրութիւն Ֆէրտինանտ Իշխանը՝ 1900ի սկիզբները պիտի ամուսնանայ Գերման մեծ Գրքուհիի մը հետ:

ՏՐԷՅՅԻՍԻ ԱՏԸ

Բարիկ 11 Սեպտ.

Տրէյֆիւս՝ որ 10 տարուան բերդարգելութեան դատապարտուեցաւ, վերաքննութեան դիմած է, որովհետեւ վճիւր տրուելէն ետքը իր անմեղութիւնը հաստատող ջախջախիչ վկայութիւն մը երևան եկաւ: Անգլիան էսթէրհաղի կողմէ Պոստրօ մը եկաւ որ յարենման է 1894 ի Պոստրօյին: Այս նոր Պոստրօն գրուած է Էսթէրհաղիի ձեռքով: Անոր կրնկերանան նաև բաղժաթիւ փաս

տարաններու վկայութիւններ, ամենքն ալ պաշտօնապէս հաստատուած, որոնք կը հաւաստեն թէ այդ Պօռտօն շատ շոյտ դըր-ւած է: Ահա այս անվիճելի վաւերացութիւնը պիտի ներկայանայ վճռաբեկ ատենին: Օտար մամուլը միահամուռ՝ վճռին դէմ է:

Ռէնի Զինւորական ատենանը միաձայնու-թեամբ ստորագրեց այն թուղթը, որով պիտի խնդրուի որ Տրէյֆիւս աստիճանագսւրկ չըլլայ:

Հանրապետութեան նախագահը ներում չնորհելու մասին ու է որոշում պիտի չի տայ մինչեւ որ իր վճիռը արձակէ վերաքն-նիչ ատենանը, որ անմիջապէս պիտի գումարուի: Կրնայ ըլլալ որ վերաքննիչ ատենանը բեկա-նէ Ռէնի զինւորական ատենի վճիռը, որով ներում չնորհելու հարկ պիտի չմնայ:

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԶՈՒԻՋՐ

Արթական տարեշրջանի վերաբացման առթիւ Պուլկարահայ հասարակութիւնը տեղ տեղ ուսուցիչներու ընտրութեան մէջ այնպի-սի անկումներ ունեցաւ, որ անտես ընել կա-րելի չէ:

Դպրոցի գործը — իբրեւ մեր ապագային մեծ գործը — ամեն հոգածութեան, ամեն խնամքի կարօտ ըլլալով հանդերձ, ցաւալի է տեսնել, որ այդ տեղեր նորէն չարչիական հաշիւներու զոհուեցաւ, ուր պատուելիական տափակ մտածումներու հետ միացած չօրպա-ճիական եսը աղտոտեցին կրթական տաճարը սոսկալի անտարբերութեամբ մը, բրէական յանցանքի հաւասար մեղքեր շալակելով:

Ինչո՞ւ փնտռել բարոյական...: Անոնք որ գիտցան մէկ կողմէն պօռտախօսութիւնը շահագործել, որ օրուան մէկ հատիկ նորա-ձեւութիւնը եղած է դժբաղդաբար, և միւս կողմէն խուճկ ծխել կուսակցական տիրող փի-շապին, յաջողեցան շատ դիւրաւ մտնել վար-ժարանի սեմէն ներս եւ տարի մըն ալ փողկելով հոն, չարունակել իրենց պաշտօնը:

Ինչո՞ւ փնտռել իրական արժանիքը...

Քանի որ չօրպաճիական հպարտութիւնը կը յափրանար աս ու ան վարժապետիկներու քծնումէն, որոնք իրենց տղիտութեան հա-ւասար կեղծաւորութեամբ կուղէին քաշքշէլ տակաւին իրենց վարժապետական կեանքը, ի-րենց հացը ազգին խեղճ տղոց արիւնին մէջ թափելով:

Կուգէ՞ք ունենալ նմոյշը...

Դեռ մօտաւոր անցեալի մը մէջ Պուլկա-րահայ մամուլը — ամենքը մէկ եղած — պատ-ռեց նետեց կարեւոր քաղաքի մը վարժապետ-ներուն հիւսած թանձր վարագոյրը, որին ետեւ խաբէութիւնը կար պարտկուած, նոյն այդ վար-ժապետիկներն են, որ այսօր — ինչպէս կը լը-սենք — 50նոցը 70ի, 80նոցն ալ 120ի բարձ-րացումով կը մտնեն միւսնոյն վարժարանը, այս անգամ տնօրէն անունով ալ մկրտուած: Ե. յօքան ալ անկում:

Եւ տեսնե՛լ, որ լրջամիտ երիտասար-դութիւնը լուռ ու անտարբեր հռիփստտես կը դառնայ այս ողբերգախառն կատակե-րութեան...: Եւ հա, ինչ որ կը յուզէ մեզ մեր սրտի խորերէն: Այդ երիտասարդութիւ-նըն էր որ «յիշուի չը յիշուի»ի նուազ կա-րեւոր խնդրոյն համար այնքան յուզուեցաւ, չը գիտենք ինչո՞ւ լուռ այս մեծ զրկանքին հանդէպ, ուր հայ մանկտին է, որ կը տու-ժէ և նոխալներու դասն համակերպութեամբ կ'երթայ բարոյապէս սպաննուելու ուսանող-վարժապետիկներու չարչիկող դանակներով:

Չ'ենք յուսար երբէք, որ այդ երիտա-սարգութիւնը անտարբեր մնայ մինչև վերջը և չ'ենք յուսար մանաւանդ որ Պուլկարա-հայ մամուլն ալ չի բազրէ այս չօրպաճիա-կան բմահաճոյքներու դէմ, ինչպէս երէկ և այսօր և յաւէտ:

Կ'սպասենք (*):

ԾԱՆՕԹ

(*) Պուլկարահայ մամուլը ժամանակին իր պարտքը կատարած է. հիմա, քիչ մըն ալ՝ ինքզինքը ուսման և կրթութեան նախանձա-խնդիր ցոյց տուող երիտասարդութիւնը թող մտածէ: Ծ. Խ.

ԶԱՆԱԶԱՆՔ

Փարիզի Շապուռ փողոցի տունը. —

Ֆրանսական կառավարութիւնը մտադրած է վերջ մշտաւ Պ. Կէսէնի եւ իր 40 ընկերներուն ըմբոստութեանը: Վերջնականապէս որոշուած տրուած է հակահրէականներու դաշնակցութեան նախագահն ու ընկերները տունէն դուրս հանելու: Որոշուած միջոցն է տունը ողողել ջուրով և մարդիկը ստիպել դուրս ելլելու՝ միջոցներու կամ. . . դաշտային մուկերու պէս: Արդէն բազմաթիւ գործաւորներ կաշխատին կոյանոցի ճամբան յարգարելու, ծակերը դոցելու և այս առթիւ կատարուած են կարգ մը շինութիւններ՝ որոնց շնորհիւ ջրհանկիր զինուորները պիտի կրնան տունը ողողել, ջուրը՝ կոյանոցի ճամբէն ներս տալով առանց հրացանի կամ ռէվոլվերի գնդակ մը ընդունելու վտանգին ենթարկուելու, բանի որ գետնին տակը ըլլալով չպիտի տեսնուին բնաւ: Միւս կողմէ ալ, ուրիշ ջրհանկիր ղեւաւորներ միւսնոյն գործողութեան պիտի ձեռնարկեն տանիքին վրայէն՝ ինչ որ ջուրի երկու հոսանքներու մէջ պիտի ձգէ Պ. Կէսէնի խումբը: Այս պայմաններով կառավարութիւնը կը յուսայ վերջ մը տալ այդ խենթ ձեռնարկին:

Անօթութեան մարդակեր. — Նիւ Եօքէն կիրակի օրուան թուականով սա սրտաշարժ դէպքը կը հեռագրեն.

Նորվեգիան Տրոք նաւը ոգոստոս 11ին ընկղմած էր Ատլանտեան օվկէանոսին մէջ: Նաւազներէն վեցը միայն կրցած էին ազատիլ լաստի մը վրայ, բայց քիչ ետքը անոնցմէ մէկը խենդենալով ինքզինքը ծովը նետեց: Երկու նաւազներ ալ բոլորովին ծիւրած՝ երկու օր ետքը ծովը ինկան: Լաստին վրայ երկու Նորվեգիացի և Գերմանացի մը միայն մնացած էին: Անօթութենէ յուսահատած, որոշեցին իրենցմէ մէկը ուտել և վիճակ ձգեցին: Վիճակը գերմանացիին ելաւ: Երկու Նորվեգիացիները անմիջապէս սպաննեցին զայն ու ար-

իւնը խմեցին: Քիչ ետքը Նորվեգիացիներէն մէկը խենթեցաւ ու իր ընկերոջ երեսը ու կուրծքը բղբաց: Ասոնց երկուքն ալ հիմայ կը դարձանուին Չարլսթընի հիւանդանոցին մէջ:

Քրոնսայֆի իշխանը սնանկացած.

— Սան Ֆրանչիսքոյէն կը հեռագրեն թէ քրոնսայֆի ոսկիներու իշխանը, Ալէքսանդր Մաք-Տոնալտ, սնանկացեր է: Պարտքը 1,200, 000 անգլիական ոսկի է: Ալէքսանդր Մաք Տոնալտ քսան տարի միլիոնատէրի կհանք վարելէ ետքը, հիմա առանց գանգատելու նորէն բահը ու բրիչը ձեռք առած գացեր է հանքերուն մէջ աշխատելու, Տոնսընի մէջ ձգելով կինը և առնելիքուորներու բանակ մը: Տիկին Մաք-Տոնալտ, որ իր էրկընէն քսան տարեկան փոքր է, ծննդեամբ անգլիացի է: Սնանկութիւնը կը վերագրուի անխոհեմ շահագիտութիւններու:

Գիւնեւորութեան դէմ. — Միշիկանի (Մ. Նահանգներ) կառավարութիւնը շատ հանձարել գաղափար մը ունեցաւ ալբուկանութեան դէմ մաքառելու համար: Նկատելով որ գիւնեւորներու վրայ գրուած տուրքը սպասուած արդիւնքը չէ ունեցած, որոշեց իսկոյնները տուրքի ենթարկել: Ո՞վ որ մէկ անգլիական ոսկիի փոխարէն արտօնագիր մը ստանայ, պիտի կրնայ ուզած տեղը խմել և չափազանց գինովութեան համար չպիտի ձերբակալուի:

Նաւարշախի մաւին Կ. Պոլսէ կը գրեն.

«Ինչ որ ամենէն հետաքրքրական ու մանաւանդ զուարճալի մասը կազմեց հանդէսին, տակաւներու մրցումն էր զոր խենդի պէս ծափահարեցինք:

Կղզեցի տղաք, բոլորովին մերկ նստած կէսէն կտրուած տակաւներու մէջ ու մէյ մէկ փայտի կտորներ ձեռքերնին, մրցման ելան իրարու հետ:

Հեռաւորութիւնը մեծ բան մը չէր. հազիւ տասը մէթր; և սակայն շատ տաժանելի եղաւ խեղճ աղոց՝ զայն կտրել կարենալը:

Վերջապէս մէկը յաջողեցաւ, յուսահատի ճիգ մը թափելով, ու մօտեցաւ դրամը առնելու՝ զոր ծովը նետեցին քսակի մը մէջ ամփոփած :

Մերկ մարմին մը դուրս թռաւ տակառէն, ճըլումպ . . . եւ արդէն իսկ անհետացած էր ջուրին տակը :

Երկվայրկեան մը չանցած, տղան տակառին մէջ վերադարձած էր դրամը ձեռքը :

Միւսին կերպով վարձատրուեցան նաեւ երկրորդ եւ երրորդ հասնողները . եօնուղ ձուկի պէս ծովուն յատակը կիջնէին ու պարզէին առած վեր կելլէին :

Գատըգիւղի բուլինկ Գլիւպին կողմէ ալ նաւարշաւ մը կազմակերպուած է որ սեպտ. 2 հինգշաբթի օրը պիտի կատարուի Մօտայի առջև :

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

— 0 —

ՏԻՒԻՆ ՀԲԱԲԻՐ

Հիմա 25—28 տարեկան է Հրաբիր հանրմ, որ ամուսնացած է և 1—2 զաւակ ալ ունի, զոր պիտի աշխատի կրթել ու խնամել եթէ սակայն միջոց մը կարենայ ունենալ. որովհետեւ գրեթէ ամեն օր զրացիներուն տունները անդաստան կը պտտի ժամերով. ամուսինը երբ իրիկունը տուն կը վերադառնայ՝ շատ անգամ՝ կանոնաւոր կերակուր մը չի գտներ. Հրաբիր հանրմ ինքզինքը այնչափ տուած է բամբասանքին՝ որ իրիկուն համար պատրաստելիք կերակուրն ալ կը մոռնայ, խմելիք ջուրն ալ. խեղճ ամուսինը որ յոգնած գազրած եկած էր, կը պարտաւորի աղցան պղպեղով ու պանիրով գոհանալ :

Հրաբիր հանրմ երբ փողոց ելնէ, չես ըսեր թէ կոշկակարի մը կիներ է. վաճառականի կամ սեղանաւորի կնոջմէն ամենեւին տարբերութիւն չունի : Եկեղեցին գտնուած ատենը իր բովիներուն հետ անդադար չը խօսի, անոր ասոր հարսին, աղջկան, կիս-

րոջ ու պարոնտատին վրայօք. շատ անգամ կը հպարտանայ թէ՛ ինքը Աստուածաշունչ կը կարդայ, միայն չի խոստովանիր թէ արդեօք կարգացածը կը հասկնայ . . . :

Հրաբիր հանրմ և իրեն նմանները երբ զիրար գտնեն, բամբասանքը այնչափ կերկարեն որ մեկնելու պահուն ժամերով փողոցին դրանը մէջ կեցած, «Աման կեցէք, չի մոռնանք սա ալ ըսենք, նա ալ ըսենք» ըսելով կը խօսակցին. հոգ չէ եթէ անդին իրիկուն համար կրակին վրայ դրուած կերակուրը խանձի կամ այրի :

Հրաբիր հանրմ միշտ սա յոյսը ունի որ, օր մը չէ նէ օր մը պիտի հարստանայ հեռաւոր կամ մօտաւոր ազգականներու մահուամբը կամ ամուսնոյն յանկարծակի հարստանալովը, և այսպէս իր օրերը կանցունէ ըստ թրքական առածի թէ՛ «Լէյլէին էօմրի. Լաք Լաք Ըլա կէշէր» :

ԱՏՈՎՄ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ



ԱՂԶԻԿՏԵՍԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Անցեալ շաբթու հայաշատ բաղաբի մը մէջ գաւառացի երիտասարդ մը՝ Կանկառիկ տուտու. անուն խաւովուց կեկան մը առաջնորդութեամբ աղջիկ տես կերթայ Էսնաթ դասակարգին պատկանող ընտանիքի մը տունը : Երիտասարդը որ աղջկան հօրը ունեցած վիճակին լաւ տեղեակ էր, սրահին մէջ տեսած այնքան հարուստ կարասիքը իր ուշն ցւզարմանքը կը գրաւեն. թաւշայ թիկնութիւն ու թեւթեւներ, պոօ, գօնցօլ, երկու թանկագին չինական ծաղկաման, գետինը պարսկական ընտիր գորգ, վերջապէս առաջնակարգ հարուստի մը տան կարասիքին մէջ հաւաքածոն հոն կերակար :

Աղջիկտեսի ձեռակերպութիւնները կատարուելէ ետքը, երիտասարդը կը մեկնի Կանկառիկ տուտուին հետ :

— Է՛յ զաւակս, միւսիւ Մկրտիչ, կըսէ խըլափուզ տուտուն. ինտո՞ր գտար. անլման աղջիկ չէ՞. սա կովածիս խտար կայ եղեր եմ:

—

— Ճուղապ չես իտար կոր ամա, կայնէ քեզի պան մը ըսեմ. տունին նօպիւհան տեսա՞ր ա՛, թըպխըսըն դուն ալ պիտի չինես, չիւնքիւ աղջիկը անանկ տեսած է:

— Աղէկ ամա, ատոնց տունին մօպիլեան իմ աչքիս 100 լիրայէն եւել երեցաւ. հօրը վիճակը գիտեմ նէ՛, անտար վարիւթի տէր չէ. ատ մօպիլեան ուրկէ՞ ձեռք անցուցեր են, բէք մէռաք եղաւ ինծի:

— Քա ետքում, չունեւոր ըլլալը ինչէն գիտես կոր. մարդուն ճէպին բարան համրեցի՞ր, ասոնց օլտու օլալը գարալը գուլթու կըսեն:

— Անանկ է նէ 25ի տեղ՝ 50 ոսկի թող տան:

— Աւայ չէ՛ չէ՛, էվէլ չեն կրնար, ան ալ դուն ես տէյի կուտան կոր. դրախտ մասըդ ալ ուզող եղաւ ամա՛ չի տուն. քու վարըչիդ պիչիմիդ բէք հաւնած են:

— Ունեւոր են, խաբալը խութի են ըսելուդ համար կըսեմ կոր:

— Աղէկ ամա աղջիկը իրմէն պզտիկ քուր մըն ալ ունի, օր ըլլայ՝ անոր համար ալ էբէյի փարայէն պիտի ելլուի: Դուն հիւսա աս աղջիկը ինտո՞ր տեսար:

— Է՛հ գէշ չէ.

— Աւայ բէք անման զաւակ է. տասը մատնէն 10 հիւնէր կը կաթէ. հօշ ես ասոնք բիւթիւն աղամուճայիդ ըսած եմ, անկա գիտէ, իրեն հարցուր: Ես վաղը առտու նորէն խանութ կուգամ ու հետը կը խօրաթուիմ. հայ տէ չիմտիլիք էրթաս բարով. աս գիշեր աղջիկան տունը պիտի մնամ քի հօրը բերանը բնտւեմ, ըսելէն ետքը կանկառիկ տուտուն կը բաժնուի եւ աղջկան տունը կը վերադառնայ: Իսկ երիտասարդը կարասիներու մասին ունեցած հետաքրքրութեանը գոհացում գըտնելու համար խնդիրը իր մէկ բարեկամին կը պարզէ, բարեկամը որ ասանկ բաներուն տեղեակ անձ մըն էր, կ'որոշէ նոյն գիշերը մուծը

կոխելէն ետքը անոր հետ աղջկան բնակած տանը փողոցին մէջ պտտկիլ:

Ահա ժամ անցնելէն ետքը տանը դուռը կը բացուի ու մարդ մը դուրս կ'ելլէ կըռնակը ունենալով գօնցօլի մարմարեայ քար մը, անոր կը հետեւի երիտասարդ մը, որ պարսկական գորգը շալկած է, ուրիշ մը թաւշեայ աթոռներու լեռանը տակ կը տքայ, կանկառիկ տուտուն ալ երկու չինական ծաղկամանները բոնած անոնց կը հետեւէր: Երիտասարդը անոր մօտենալով կամացուկ մը կը հարցնէ:

— Խեր ըլլայ, կանկառիկ տուտու, տունէ՞ն կելլաք կոր, չէ նէ ասկէ անկէ առնուած մօպիլեաները կը տեղաւորէք կոր: Կանկառիկ յանկարծակիի եկած. — Աւայ երկու աշկըդ խաղայ, տղայ, իս տապտուրի հանեցիր. աս վախիթ աս թարափները ինչ բան ունիս:

— Ընկերոջս հետ քիչ մը պտտելու ելանք, աս կողմերը ինկանք. հիմա ան մէկդի ձգէ, ասոնք ո՞ւր ագտարմա կընէք կոր. . .

— Քա ճանրմ, կայնէ քի ըսեմ, ինքը. . . բանը. . . նօպիլեաները. . .

— Շիտակ ըսէ, մէռաք ըրածիս խտար կայ եղեր եմ. ասոր կըսեն՝ «էլ մալը իլէ կէօլ պօյալամագ», մայէթինտէ ալ աս մօպիլեային պէս կուզեն կոր, հէ՞. դրեցի են ըսելով մեզի մօխի՞ր պիտի կլլեցունէին:

— Է՛յ տօղրուսու, բէք աղէկ կը հասկընաս կոր եղեր, վրայ կը բերէ կտրող կապող խալափուզը. աս նօպիլեաները իրենցն է ամա՛ բովի տունը աս գիշեր աղջիկտես պիտի գան տէյի հոն կը տանինք կոր:

— Է՛յ գօնցօլին քարը ո՞ւր տարաւ մարդը, անգիի սօխա՞նն ալ աղջիկտես կայ:

— Քա ճանրմ, հոս պիտի բերի ամա, աճէլէյով տունը աղէկ մը թարիֆ առած ըլլալու չէ, որո՞ւ հոգ, ինք պիտի յոգնի, պտտցունէ պտտցունէ նորէն հոս պիտի բերէ:

— Արթըն դուն ատիկա իմին կէճէլիք բիւլահիս հանկցուրդ, ըսելով կառնէ կը քալէ ու այսպէս իր հետաքրքրութեանը գոհացում

կուտայ, ուխտելով միայնգամայն որ ուրիշ տուն իշխանող կնիկներու խօսքերուն կարեւորութիւնն չի տայ:

ՋՈՒՐԸ ԻՆԿԱԾ

Վառնայի Թաղ Խորհրդոյ ընտրութիւնը

Նախկին Սիոակեան ընկերութեան վարիչ Ժողովին տալ խոստացած 1600 ֆրանքին հաշիւը.

Բանի մը տարիներ առաջ Տիկնանց ընկերութեան կողմէ սարքուած վիճակահանութիւնը.

«Բըթի Շարժում»-ի թրքաբարբառ հրատարակութիւնը.

Հայ ընթերցարանի բացումը.

Մէկ քանի խղճահարներու կոկորդը անցած Ազգատախնամի գրամներուն գանձումը.

Խաչագողները հրապարակէն հալածելու համար կուսակցութեանց կողմէ տրուած պաշտօնական խոստումները.

Ասոնց ամենքն ալ առայժմ ջուրը ինկած են:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Պուրկազ

Նշանաւոր առաւփախաւ մը՝ չի ճանչցուելու համար գէմբը այլակերպած ու գլուխը սրիկան (աւազակային) գլխարկ մը գրած հոս հասաւ, բայց կռահելով որ գիմակազերծ պիտի ըլլայ, ինքզինքը շոգեկառք նետեց ու անհետացաւ... չենք գիտեր ո՞ւր:

Կապրովա

Երիտասարդ մը, որ երկու ոսկինոց մէջադիտել մը խօսք-կապ տուած էր օրիորդի մը և երեք տարիէ ի վեր կերթար կուգար, անցեալ շաբթու 50 ոսկի դրամօժիտի խնդիր մը հանեց, կանխադիտնալով որ ալլկան ծնողքը անկարող էր այդ գումարը վճարելու, ու երբ իր ախ անիրաւ առաջարկը մերժուեցաւ,

ուրախութեամբ խօսք-կապէն հրաժարեցաւ, սա միևնույն ժամանակ երեք տարի անցուցած ժամանակները երկու ոսկիէն շատ աւելի կարժէին:

Բլէշնա

Նոր փետայ մը՝ կնոջը ունեցած գոհարեղէնները «Ոսկերիչին տանիմ քեմիլցունեկ տամ», ըսելով զանոնք առաւ և մօնետիկի մը ձեռքով ծախեց քեմիլցուն:

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

Հայաշատ քաղաքի մը Աղգ. վարժարանին համար ուսուցիչներ... բարձրահասակ ըլլալու պայմանաւ: Դիմել խմբագրութեան: Աւելորդ է ըսել թէ՛ կարճահասակ եղողները որչափ ուսման ու կրթութեան տեսակէտով առաւելութիւն ունեցած ըլլան բարձրահասակներուն վրայ, անընդունելի են, վասն զի փնտռուածը հասակին պատկառելի բարձրութիւնն է:

Բոժ.— «Վարժապետ տէտիլին քէլլէ գուլագ եէրինտէ, պօյլու պօյլու վէ հիյլէթլի օլմալը» կըսեն եղեր:

ԹԱՏՐՈՆ, ՊՕՐԻՍ

Հաճի Բանաբօ

1899 Սեպտ. 7 երեքշաբթի գիշեր ժամ 9

Արտաքոյ կարգի զուարճալի երեկոյթ

Ի Նպաստ

Ա. Գեր. Ստավրոյի և Տոմսակահաւաքչին

ԳԵՆՈՎԱԲԷ

Մեջկատակախաղ 6 որոր և 8 Պատկեր

ԵՐԳ. ՔԱՌԹԷԹԹՕ

Մատմզ. Լիզա և Ճիօվաննի Քիրիօբուլօ

ԺԻՄՆԱՍՏԻՔ

Մատմզ. Քաթինա և Եանի Տրականօֆ

Պալէթ, Մատամ Քաթինա և Էլէնի

Ա. Անգամ ըլլալով

ԾԵՐ ՍԻՐԱՀԱՐԸ

Կատակախաղ Տաճկ. լեզուաւ երկու որոր չորս պատկեր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պոնճուկեանի պատկեր-
րազարդ Քերական — Ընթերցարանը :
Գին 60 սանդղմ. վարժարանաց համար
100ին 15 զեղջ :

Դիմել սա հասցեով

J. G. BONDJOUKIAN VARNNA

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՑՈՐԵԿՈՒԹԻԿ


Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Կը վերաբացուի սեպտեմբեր 1/13ին :
Ընդունելութեանց պայմաններու և ուրիշ տե-
ղեկութեանց համար դիմել նամակով կամ ան-
ձամբ՝ առ

Հիմնադիր-Տնօրէն

Հայկական Կրթարանի

Կ Ր Օ Ն Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն



Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Տրակաման փողոց թիւ 1210, Վառնա

Ժամանակէ մը ի վեր երկրագոր-
ածկան մեքենաներով զբաղած ըլլալուս
պատճառաւ իմ մասնաւոր գործարանի
գոյ կը մնար. հիմա զայն վերաբացած
ըլլալով, կը ծանուցանեմ թէ, ամեն տե-
սակ կարի մեքենաներու համար մաս-
նագէտ վարպետ մը բերել տուած եմ :

Գործարանիս մէջ կը նորոգուին նաեւ
շողեշարժ և ջրաշարժ մեքենաներ, հե-
ծանիւններ (պիսիքէթ) գուլպայի և եր-
կրագործական մեքենաներ, ջրհաններ
և այլն, զորս նորոգելէ վերջը եթէ մէկ
տարուան միջոցին աւրուին, պատրաստ
ենք վերանորոգելու : Նոր ջաղացներ և
շողեշարժներ նաեւ ի նորոյ կը հաստա-
տենք կանոնաւոր կերպով :

Մենք Վիճակաւորութիւն

ՍՈՑԻԱԼ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխատեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած
են, որոնց 25,000ը պիտի շահին հե-
տեւեալ կարգաւ .

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր .
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-3նոյ	16,000	"

Ամբողջ	Կէս	Փառորդ	Մէկ տըրք.
Ա. Ամբ. 10 ֆ.	5 ֆ.	2, 50 ֆ.	1, 25 ֆ.
Բ. " 16	8	4	2
Գ. " 20	10	5	2, 50
Դ. " 28	14	7	3, 50
Ե. " 24	12	6	3
Զ. " 17, 20	8, 60	4, 30	2, 15
115, 20	57, 60	28, 80	14, 40

Գինը և մանրամասն տեղեկութեանց համար պէտք
է գրել Սեղանատը Տիար ՍԱՐԳԻՍ ԳԱՅՐԻԷԼԵԱՆ,
միակ գլխաւոր գործակալ տղն Կիւսակահանութեան,
Վառնա, Մուսլլա :

Շրջակայ քաղաքներէն եկած յանձ-
նարարութիւնը փութով կը կատարուին :

Մ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ
Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պար-
տաւոր է առջի կարգերուն փոխարէնն
ալ վճարել :

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печантица Взаимность — "Варна."